

Տաղաչափութեանն ձեռք

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

ԵՐԿՄՈՒՆՔ ԳԻՒԱՅ ԵՒ ԱՄՏԻՅ՝

Ե. ԵՐԿՄՈՒՆՔ ՀԻՒԱՆԴԱՅ

Նկատեցինք վերև (369), թէ հին ազգեր և Հայերն իսկ մարմնական խօթութիւնքն ու սովորական երեւոյթները դիւանական ազդեցութեանց կ'ընծայէին: Մեր քով յարատեւեց այդ համոզումը շատ ընդարձակ սահմանի մը մէջ, և անոնց խափանման համար յատուկ դարմաններ անպակաս էին: Այդ նպատակաւ մեր յետին դարերուն, կամ գոնէ առաւելապէս այդ ժամանակի գրչագրաց մէջ, ի հրապարակ կու գան երզնեցուցման բազմաթիւ ու կախարդակերպ գրուածներ, ճապարկուած Աւտարը անուամբ ծանօթ գրող մէջ: Անոնց արհամարհութեամբ մը նայուած էր ցարդ՝, մինչդեռ այն դերը՝ զոր կատարեր են ազոնք, աւելի մոռալորութիւն մը կը պահանջէր՝ մեր հարց կրօնից պատմութեան տեսակետով:

1. — Կիլգրիանուս — Յիշակալ գրուածներէն շատ օրինակներ կը պահէ վանացս մատենադարանը, բոլորն ալ նոսրագիր ու նոր և այլազան բովանդակութեամբ, բաց ի միոյն՝ որ գաղափարուած է ՋԼԳ (1484) թուականին¹, ու գրչէն սահմանուած՝ «սուրբ բժշկականն որ կոչի Կիլգրիանուս»։ — կոչում մը՝ որ առնուած է համանուն սրբոյն ընծայուած կրկին աղօթքներէն՝ որ կան անոր մէջ. — և որ իւր առաւելագոյն հնութեան համար կը բերուր և արժանի է մեր առանձին ուշադրութեան, իբր հարազատագոյն ներկա-

Գանձերու և Տաղերու մէջ բազմաթիւ են Տաղաչափական ձևերը, յորոց մի քանին միայն կը նշանակենք. Ա. Հնգոտնեայ կամ միանդամեայ, այս չափով գրուած են ընդհանրապէս Գանձերու մեծամասնութիւնը. ինչպէս Տէր Մխիթարայ «Գանձ Բուն Բարեկենդանին».

«Երգս յաւեժական
Երգեմք բանական
Երկրցդ միական
Ի նմանս աննրման» և այլն:

Բ. Երկանդամեայ, որոնք հետեւեալ ձևերով կարելի է գտնել Գանձերու և Տաղերու մէջ ա 4-3, բ 4-4, գ 4-5, դ 5-2, ե 5-5, յ 5-6 և այլն:

Գ. Եռանդամեայ, հետեւեալ ձևերով. ա 3-3-3, բ 3-4-4, գ 4-4-4, դ 5-2-5, ե 5-4-4:

Դ. Քառանդամեայ որ է հայրական տաղաչափութիւն կոչուածը:

Ե. Կան նաև ձևազոյնաւոր տողեր, թէև հազուադէպ:

Ձ. Խառն, այսինքն տան մը առաջին տողը երկանդամեայ կամ եռանդամեայ, իսկ երկրորդ տողը միանդամեայ կամ երկանդամեայ, և այլն:

Այս նշանակուածները զեռ մի մասը կը կազմեն տաղաչափական այն բազմաթիւ ձևերուն՝ որոնք կան մեր քերթողներուն և բանաստեղծներուն քով. և որոնց մի առ մի օրինակ բերելը պէտք է դուրս նկատենք մեր ներկայ գործին ծրագրէն:

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ



1. Տես և յէջ 49, 107, 257, 321, 369.

2. Հ. Ղ. Աւետիս, Հին հայաստան, ԺԱ, 408-9.

3. Փոքրիկ մատնան մը, $9, 4 \times 6, 5$ հրդ. տարածութեամբ և 94 թերթով. — Այս ընտիր գրչագիրը վերիպած կը թուի Հ. Աւետիսի ուղագրութիւնէն: Հին հայաստանի ուղագրութեան մէջ, ուր ոչ միայն չէ գոյտած անտի, այլ անունն ալ սխալագիր օրինակէ առած՝ «Կլգրիանուս» կը գրէ (ԺԱ, 402, Դ). Թող ուրիշ կարծաւորագոյն տարբերութիւնքը:

յացուցիչէ հին աւանդութեանց՝ որոնք մա-
նաւանդ — քան թէ մատենան ինքնին —
են մեր քննութեան նիւթ:

Աւելին կայ, սա ունի՝ բաց յայլոց՝
չորս կանոններ հիւանդաց, դիւահարաց,
ջերմութեաց ու դժուարին երկանց, որ սո-
վորական են արդի մաշտոցին՝, և սակայն
վերջնոյս գրչագիրք գրեթէ չեն ճանաչեր
զանոնք: Առ այս քննեցի վանացս հնա-
գոյն օրինակները՝ թուով տասներկու, ինչ-
պէս ծԱ դարուն, և 1338, '45, '86,
'87, 1436, '55, '99, 1547 և '61 տա-
րիներուն, որոց մէջ ընդհանրապէս չկան ա-
նոնք: Միայն 1216ի օրինակն ունի՝ իբր
զարտուղութիւն՝ դիւահարաց ու ջերմու-
տաց կանոնները, և դարեր վերջ՝ 1530ի
գրչագիրք չորսն ալ, զորս սա նոյն կար-
գով ու յօրինուածով առած կը թուի ուղ-
ղակի կիրպիւնութիւն, ինչպէս ըրած լինե-
լու է առաջինն ալ իւր երկուքը: Եւ սա-
կայն հայ եկեղեցին սկիզբէն ի վեր ու-
նէր զանոնք պաշտելու սովորոյթը, զոր
տեսանք մասամբ երդմեացուցչաց քննու-
թեան մէջ (աստ, 377): Մանդակունին կը
յիշատակէ նաեւ «զպահս և զաղօթս ցա-
ւածին» (ԻԶ, 187): Եւ ծԱ դարու մաշտոցը
նորոնձայ քահանային շնորհ կը խնդրէ՝
«առ ի մերժել և հեռացուցանել զախտս
չարչարանաց» ժողովրդեան և Լաւ. ո՞ր
մատենէն կը պաշտէին ուրեմն այդ կանոն-
ներ: — Պարտինք առանց վարանելու հե-
տեցնել՝ թէ հայ կղերը սոյն վախճանաւ
գործածեր է մեր կիրպիւնութեամբ, — կամ
թերեւս ուրիշ որ և է կիրպիւնութեամբ մը՝ ժա-
մանակին համեմատ խմբագրուած, — իբր
կէս պաշտօնական գիրք մը, իբրեւ մաշ-
տոցիկ մը հիւանդութեանց յատուկ, կամ
«թոշկական» մը՝ ինչպէս լաւ կ'որակէ գա-
ղափարողը, որոյ համար «սուրբ» ալ է
այն՝ նման ուրիշ եկեղեցական գրոց: Եւ
արդէն անոր մէկ կանոնն ըստ իւր հրա-

հանգաց կը կատարէ «քահանայն» և «ի
դուռն եկեղեցւոյն»։ միւս մը՝ «յորժամ
քահանայն առ հիւանդն երթայ»։ դժուա-
րածին՝ նոյնպէս «երթայ քահանայն»։
օժանարաց վրայ՝ «առնու քահանայն և
ընթեռնու» նոյն մատենաւ։ և անոր գա-
ղափարողն է կարապետ անուն «երէց»
մը։ վերջապէս քահանային սեպհական
հատորիկն է այն, զոր աւելի յաճախ ըրու-
ներ է նա իւր ձեռաց մէջ քան զմաշտոցն
ինքնին։ Հետեւաբար կիրպիւնութիւնս
թիւնը շատ աւելի հին էր քան ծանօթ օ-
րինակը՝, որոյ ուրիշ նշաններ եւս պիտի
տեսնենք յաջորդ գլխոյն մէջ։ — Այս
բոլորն ըսի, որպէս զի ցուցնեմ՝ թէ այն
սնապաշտ համոզումները զորս պիտի նը-
կատենք ազոր մէջ, յատուկ էին ոչ միայն
հայ ոսմիկին, այլ և համեմատաբար զար-
գացեալ դասուն, ինչպէս էր եկեղեցակա-
նութիւնը։

2. — Յօրինութիւն։ — Մատենան խառ-
նուրդ մ'է արդէն յիշուած կանոնաց,
Շնորհալուոյն ու Նարեկացւոյն ժամագրա-
կան երեք աղօթից, ս. Գրոց ընթերցուա-
ծոց, և ասորմէ աւելի՝ բազմաթիւ անսո-
վոր երդմեացումանց։ Հոս՝ այս վերջնոց
մէջ, — որոց վրայ միայն պիտի սեւեռեմ
ակնարկս, — մեր առջեւ կը հանդիսանայ՝
իրեւն ի հայեւոյթ՝ նոր աշխարհ մ'անե-
րեւոյթ, զոր ստեղծեր է իրեն համար և
որոյ մէջ ապրեր է միշտ հին հայ միտքը։
Աշխարհ մը՝ զոր չենք ճանաչեր մեք, և
ոչ Աւետարանը։ Աշխարհ մ'ոգիներու, ուր
բարւոյն ու գեղեցկին հետ կը խառնուին
չարեր, վերջինքս հաւաքուած երկնքէն,
արեւէն, աստղերէն, կարկտէն, երկրէս,
աշխարհի չորս կողմերէն, ջրէն, լուսնն ու
խաւարէն։ և կ'որոշուին նախորդներէն
իրենց անհեթեթ կերպարանք, անձնիւր
ախտերով ու կրքերով, զանազան չարա-
բուստ պաշտօններով, նաեւ պատառոզ-

1. Տգ. Վննակոյ, յէջ 96, 104, 108, 90.

2. Բարեկեցւոյն առ Սահակ արք. Թղթոյն մէջ կ'ը-
սուի՝ Թէ երբ Բարթողոմէոս Առնեպետաց զաւանդ հա-
սու, տեսաւ որ ընդհանր շատութեամբ քրմերէ կ'առ-
նուին «Ժբար Թարխան» ի պատիւր ախորհն, որ-

պէս զճարսն կիրպիւնութիւնս առ ի պատիւր Յուստինեայ
կուսին» (204)։ Պէտք չէ՝ հետեցնել՝ թէ զայս զորոյն
արդէն կը տեսնէր կիրպիւնութիւն աղօթից հայ Թարգմա-
նութիւնը։

ներ, ենթակայ նոյն իսկ մարմնական արտաքին պակասութեանց: Տեսակ մը հեթանոս դիցարանութիւն, որ բարեգործ ու բարեմոյն (Աթենասայ և Ասկղեպիոտի լով կը դնէ գիտախօսի կատաղիներ, մանկակեր կռոնոս մը, կաղ Հիփիասոսոս մը: Տճեւ ուրուականներ՝ սրոց սովոր է կեանք տալ ուղեղը՝ որ տենդին պատճառած անդոհական ցնորքներով կը զառանցէ: Ու հին Հայը, մշտնջենապէս տենդաշար, մէն մի քայլին մատնուած է անոնց սարսափին՝ որ կը հետապնդի ու կը հալածէ գինը, էւ իւր պաշտօնեայն, հաստակից մ'անոր, եռանդուն ու հաւատարիմ իւր կոշման, կը վազէ միշտ անոր սգնութեան, զինուած իւր կիպրիանոսով: կը կաշկանդէ դեւերը, ցաւերն ու զեռունները, կը պրկէ դիւթիչ աշերն ու լեզունները, որպէս զի խափանուին յարձակիլ հաւատացելոյն վրայ: Ի հակառակէն՝ կը խզէ ծածուկ կապերն ուրոցմով պարուրած են զայն կախարդներ, չես գիտեր երբ և ինչո՞ւ. կ'առնառածնէն երդումներ՝ պէսպէս իրական ու երեւակայական վկայից վրայ: Իրարու դէմ կը ճակատեցնէ սուրբերը կամ հրեշտակներն ու դեւեր: Էւ խառնակոյտ զանգուած մը կը յօրինէ՝ հոգեղինաց ծանօթ ու անծանօթ խուժողոժ անուանց, յիշատակաց, անլուր անխտակութեանց: Իմիշկ ու դեղ անկարողութեան կը մատնուին և իսպառ կը մոռացուին այդ համաճարակ ուղեղատապին մէջ, որոյ տեսին զմեզ, այդ Հայուն արդի — ինք թերեւս պիտի ըսէր խորթ — զաւակներս կը զուարճացնէ, ու՝ քնականապէս՝ քիչ մ'ալ կը տխրեցնէ:

Դանք մօտէն զննել զըզգարիս քանի մը մանրամասնութիւններ:

3. — Երգումն Աղադոյ. — Ունի՞ զոր օրինակ՝ «Աղաթի սրբոյն կիպրիանոսի», զոր կարգան յաւուր կիրակէի, զոր աւսացեալ է վասն դիւաց և աղանդաւորաց՝ որ կապեն զօրդիս մարդկան»: Այս տեղ

յիշուած «կիրակէն» ոչ թէ դիպուածի, այլ ըստ իս եօթնեկի աուրց խորակահանութեան արդիւնը է, ծանօթ Ե դարէն իսկ (Մանդ. Իջ, 192), և որ դեռ կը պահուի յետին դարերու անխտարական զուշակութեանց մէջ: — Իսկոյն կը յարէ մաղթանոս. «Վ և ձ և նր (1172) աղանդն կախարդաց արձակեալ և հեռացեալ եղիցի ի ծառայէս Այ.» Էւ ապա նոյն վկային բերանէն խոստովանաբար կը պատմուի իւր նախկին աղճատ կեանքն ու դարձն ի հաւատս՝ — Ասոր կը յաջորդէ «Պատմութիւն Յուստիանէ կուսին», ուր ս. կիպրիանոս կ'արձակէ իւր երբեմն կապանները՝ երկար բանաձեւով մը, և կը յարէ երդում մը՝ կէս մ'արձակ ու կէս մը չափով, — նշան թարգմանչէն յերիւրեւելուն, — որոյ միջէն կը քաղեմ հետեւեալը: «Երդմեցեցանեմ զքեզ, սատանայ, անուամբն Այ. Յի. Քի. տն. մերոյ, և յանունն յայն որ զԱզամ բաղկացոյց և զԵւայ, ի ա և (1001) անունն Այ. և ի յինն դաս հրեշտակքն՝ որ եւանեն և իջանեն ի յԱպրիպաւիս քաղաքն» և այլն. և աւելի փաղարջականը, «Ի գեղեցկութիւնն Աղամայ, ի վայելչութիւն զըախտին, ի խոնարհութիւն ամենայն սրբոց, և ի սէր ամենայն մարտիրոսաց, ... ի հաւատս և ի հիւրընկալութիւնն Աբրահամու, ի կապանն իսահակայ, ... ի համարածումն Եղիայի, ... ի տախտակքն Մովսէսի, ի պատմութեանն Ահարոնի, ... ի քնարն և ի սաղմոսն Դաւթի, ... յաւետիքն Գաբրիէլի», և ուրիշ անհամար իրական ու բարոյական, պատմական ու տնօրինական վրկայից վրայ. ինչպէս և «Ի բանն անծախելի, — ի լոյսն անճառելի, — ի թագն անպատմելի, — ... ի թագաւորն սուսկալի» որ է Աստուած. «Ի մատանին Ողորմոնի, — ի կապանսն պղղեծծի, — ... ի յաղանթսն Ահարոնի, — ի պատմութեանն ցանկալի, — ի սուրբ ծաղիկն Անայի»,

1. Բոստ արեւելեայց՝ կարթագինեցին, այլ ըստ արեւմտեայց՝ անտիոքացի Մար:

2. Այդ կամ այդպիսի «խոստովանութիւն» մը ծաւ

նօթ է նաեւ արեւմտեայց (Bollandi, Sept. IV, 347), որոյ քնաղբիւր զգրախտաբար չկարողացայ տեսնել:

3. Ձայդ պիտի տեսնենք աւելի վերջ (Բ, ա)

— այսպէս անգթաբար նետուած մթին հաւ մոզմանց ու պաշտամանց ստուերին մէջ, — որպէս զի «Ուր այս անուանքս սուրբ յիշեցի», — Գիրս և հրամանքս պատահի, — Չարն ի բաց միշտ հալածի, — Կապը և աղանդընքն լուծանի — ի ծառայէս՝ որ է բարի»։ չափազանց բարի ու պարզամիտ՝ այդքան աղանդոց մէջ պաշարուած զգալու համար իւր անձը։

4. — Երդասմն պահպանողակուն։ — Առաջնոյն կը յաջորդէ ուրիշ աղօթք մը, վերնագիրը կիսովին եղծուած, ուր կը կարդացուի միայն «... (ճանա)պարհի, ի ննջել և ի յանել։ ամէն»։ այս ինքն է ընթերցանի որ և է հաւատացելով վրայ խորեւ ընդհանուր նախապահանքս օգնու թիւն։ Ու կը սկսի այսպէս. «Միւրայէլ, Գարբիէլ, Դուրիէլ, Ջիթայէլ, Ռաֆայէլ, Խութայէլ, Փութայէլ, Բարեխաւսութեամբ սբ. Աստուածածնին» և այլ բոլոր սրբոց, զորս յաջորդաբար կը ցուցակագրէ շատ մանրամասնօրէն, «արծալեալ և հեռացեալ և խափանեալ եղիցի ամենայն կախարդութիւնք և աղանդաւորութիւնք ի ծառայէս Այ. (յոտարկ՝ սնուան համար). աւմէն։ Յանուն Այ. և ինն դասուց հրեշտակաց նորա կապիցի գամենայն չար աչք և զչար լեզու այն կապանաւքն՝ որպէս կապեաց Մովսէս զծովն կարմիր», Յետո՛ւ արեգակն ու լուսինը, Եղիս՝ երկինքը, Էն։ կը խնդրէ նաեւ «զամենայն շնորհք երեսաց և աջողութեան դատաւորաց», այս ինքն դատաստանի մէջ հաճելի լինել դատողաց. «և տուր սրբայ զշնորհք երեսացն Յովսեփայ զեղեցկի, և Դանիէլի և երից մանկանցն, և ինքնատուսի սատուածագեցիցի» և այլոց։ Ու կ'աւարտէ այսպիսի մանուաւ ծաղատ քանախաղով մը, որ չես գիտեր՝ ինչ կապ ունի նիւթին հետ. «Երկինք ի վերայ չորից տարեւոյ երկրի. երկիր ի վերայ ջուրց. ջուրք ի վերայ ծովու. ծով ի վերայ աւազոյ. աւազ ի վերայ խորոց. խորք ի վերայ անդնդոց. անդնդք ի վերայ հաստատութեանն. և հաստատութիւն ի վերայ անմահ բանին Այ։ Յանուն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ պահեսցին

ծառայցս Այ. (յոտարկ) և պահպանեսցին յամենայն փորձանաց հոգւոյ և մարմնոյ. ամէն»։ Վերջաբանէս կ'երեւի՝ որ զայս կը կարդային նաեւ բազմութեան վրայ։

5. — Ուրաբարայիր։ — Նոյն մատենին մէջ կայ նաեւ «Աղաւթք որ կոչի Ուրաբարագիր», կատարելի քահանայէն «հիւանդին» վրայ. «Ուրաբարագիր» կոչուած մեզ ենթադրել կու տայ անոր կապակցութիւնը՝ միշտ խտրական ոգով՝ ուրբաթ օրուան հետ, որոյ վրայ կ'աւելնայ յետոյ չորեքշաբթիին ալ, ինչպէս կը կարգամ վանացս ժնդարու օրինակի մը մէջ. «Ուրաբարագիրք. ուրբաթ աւր կամ չորեքշաբթի տանին զհիւանդն ի դուռն եկեղեցւոյն» Էն։

Այս տեղ պաշտօնեայն կը կապէ և կ'երդմեցնէ դեւերը և անոնց պատճառած բոլոր ցաւերն ու պատահարները։ Աղօթքէ աւելի ճակատամարտի երեւոյթն ունի այն։ Ահաւասիկ անկից ուշագրաւ համառօտութիւն մը։ «Կապեմ զքեզ, խիթ և զլիսացաւ, անուամբն Այ. որ նստի ի մէջ սերովբէից. յորոյ բերանէ հուր ելանէ անդադար. ի տաճարի նորա որոտումն. ի ներքոյ ոտից նորա հրեղէն լեզու. և հուր անպակաս յաւիտենից... Կապեմ զքեզ, սատանայ, անուամբն Այ. որ ստեղծ զքեզ ի լուսոյ և ի խաւարն կորոյս զքեզ... Երդմեցուցանեմ զքեզ, սատանայ, ի լոյսն որ կայ ի վերայ անմահ գագաթանն Այ.՝ ի սերովբէն, ի քերովբէն... Կապեմ զքեզ, խիթ և զլիսացաւ, բոլոր տնաւրէնութեամբն Գի. Այ. մերոյ»։ Եւ բարեկացայտ թափով մը կը յարէ այս կշտամբութիւնը սատանային դէմ, զոր անշուշտ յարմարագոյն էր այդ երդմեցուցչին մէջ փնդոել՝ քան հիւանդին։ «Այս ինձ զբոտողն. զի՞ նեղեմ զսատկեր Այ. կենդանւոյ. ապա թէ ոչ՝ ամեմ ի վերայ ձեր հրեշտակս սաստիկա որ ունին իշխանութիւն ի վերայ զիւրաց. Սարաւաթ, Սեւդար, Միսաց և Արեթնագով, Սուսա-

1. Ահարկութիւն Աստուծոյ և սրբոց լուսապսակին՝ որ ծանօթ է նկարչութեան ու քանդակ մէջ։

նէլ, Զողովդիւն... Ով էք դուք, անի-
ծեալ ստատանայ, որ հակառակ պատկերի
Այ. ահ և երկիրդ արկանէք և յերազին
զարհուրեցուցանէք, փախիք և թաղիք ի
խաւարն արտաքին, որ ոչ կայ գաղար և
հանգիստ ոտից ձերոց... Արդ ընկեսցէ՝
զձեզ ֆա. ի խորս տնդնորոց և երկիցէք
ի յերկանցն Մարիամու։ Եւ կ'ընէ հե-
տեւեալ հետաքրքրական թուարկութիւնը
դիւայ. «Թէ երկնաւոր էք, թէ երկրաւոր
էք, թէ յազդից էք, թէ ի լուսոյ էք, թէ
ի խաւարէ էք... թէ շան մազ ունիք՝,
թէ համր էք, թէ խուլ էք, թէ խն էք,
թէ դե էք... թէ այլն (ան) էք, թէ ալեւոն
էք, թէ զինչ և իցէք. թէ յերազին հար-
կանէք, թէ ընդ բուն զրուցել տայք, թէ
զգլուին բերել տայք, թէ զխելքն անցու-
ցանէք, թէ թմրեցուցանէք, թէ շան պէս
աշխլ տայք, թէ իշոյ պէս խաւորնչել
տայք, թէ երնջկտալ տայք, թէ ընդ վայր
ծիծաղիլ տայք, թէ զգլուին շարժել տայք
... թէ զընկերն կոպեցուցանել տայք, թէ
յականջն մտանէք, թէ ի բերանն մտանէք,
թէ զտղայն հեզձուցանէք, թէ շատ բմպել
տայք։ Երդմամբ և կապանաւ և հրամա-
նաւ խաչելոյն, և ուրիշ սրբոց՝ զորս կը
թուէ, «խափանեալ, տէր Աձ. զամենայն
շար և որոգայթ, իսիք և զխաղաւ ի ծա-
ռայէս Այ.։» Եւ կ'աւարտէ այսպէս. «Հրա-
մանաւն Այ. հանեմ զչարոստոս՝ ի ծա-
ռայէս Այ.։»:

Այսպէս մեր միամիտ աղօթարարին հա-
մեմատ, — Եզնկայ ժամանակակցաց հարա-
զատ յաջորդ (աստ, 370), — ամբողջն մէջ
որ մէկ երեւոյթ չկայ բնական կամ խօթա-
կան, կամ արդիւնք կրիք ու խառնուածոյ.
այլ ամէնը չար ոգւոց ներկայութեան պտուղ

են՝ որպէս թէ բոլոր հին Հայերը դիւա-
հարներ լինէին։ Եւ աւելի եզականք, ինչ-
պէս կանխաւ դիտեցինք, նոյն թերու-
թեամբ զգածեալ են նախ իրենք դեւերն
իսկ. համր են, խուլ են, ամէն բան են,
զորս յաղթականորէն կը վանէր մեր այս
աղօթքը։ Բայց թէ յետոյ անոնց լքած
խուլեմունջը կը խօսէր կամ կը լսէր,
այդ կարեւորագոյն կէտը կը լսէ կիպրիա-
նորս։

6. — Երդումն Գնեղականի. — Հայ գա-
ւառաց ազգագրական ուսումնասիրութիւնք
յաճախ մեր առջեւ կը դնեն անհաւատ
համոզումներ՝ որոցմով դեռ այսօր վարա-
կուած է մեր ուսմիկը։ Ասոց մէջ են և
դիւական ազգեցութիւնք ծննդական կա-
նանց վրայ. և այս կարծեաց ծագումը
շատ հին է, պահուած նախ Տաթևաւոյն
քով, որ կ'ըսէ՝ թէ հոգիներէն անոնք՝ որ
կ'իշխեն «ի Չուրս և ի ծնունդս կանանց»
ալը կոչեցան։ և թէ «զէջ ախտին զհո-
գիս կորուսանեն, և ի ծնունդս՝ զամբմինս
և զհոգիս» (Հրց. Գ, Գ)։ Յետոյ կը հան-
դիպինք անոր մեր կիպրիանոսին մէջ.
«Իմեն, կ'ըսէ սա, յորժամ յերկունս լինի
և դժուար, երթալ քահանայն» և կը պաշ-
տէ ընթերցուածներն ի սուրբ Գրոց, որոց
կը յարէ «Գիր ալի և ծննդականի, որ ի
դիւէն երկիրդ լինի՝ որ ալ կոչի»։ Սա է
բուն աղօթքը՝ վէպի ձևով, յորում չորս
սուրբեր, Պետրոս, Պաւլոս, Անտո և Շիաթ,
ճանապարհի վրայ կը տեսնեն «այր մի
նստեալ ի վերայ աւազոյ. հեր նորայ ի-
բրեւ զաււ, և յունք նորա պղնծիք, և ար-
տեւանունք նորայ երկաթիք, և ժանիք
նորայ որպէս վարապի՝»։ Կարծես նոր
նորոգած դանտէական դժոխքէ մը։ Այդ

1. Դիւայ անէթեթ կերպարանները, զոր կը տեսնեց
այս տեղ և յաջորդ երգանցն մէջ, հաւատաւի էին ոչ
միայն Հայ ուսմիկն, այլ և շատ ծանրագլուի մարդոց.
Էջնիկ կ'ընդունի՝ թէ զգիւս է կերպարանս կերպարանս
ցուցանէ, և ըստ իմ մարդիկ կը կոչեն զանոնք յուշ-
կապանիկ, պարիկ, ճարտար, նշանք, շուսպոստ. և թէ
կ'երեւին շուրտ և ուզող ձեռով ալ (Ա. իր, ին)։ Լու-
սաւորիք օրով «ի նմանութիւն անեւեկոյ բազմութեան
և կազմութեան զնդի» կը հոսէին անոնք մեհենակործան
Հայոց հետ (Ազաթ. ձԼ, ձԺ)։

2. Այդպէս զբնութիւն մէջ. եթէ զրէի սիւալ լէ, զեւի
անուն կը թուի.

3. Դման զաղափար մը, թէեւ քան զմեր հարցը շատ
չափաւոր, կը գտնենք գիտութեան ազանդաւորաց քով
ալ. որոց մէկ գրապանակը կ'երդմեցնէ «զամենայն դիւա
որ ունին զկերպարան օծի, և զամենայն դիւ իմբման,
և զամենայն թաւրիկ, և զամենայն կատաղութիւն, և
զամենայն ակնհարութիւն» են (Աբարեւ, 1, 1885)։

4. Երկրայ պատկերն ալ իսկ է, ճանաւած Ոձիթի
Թուակիր գրապանակէն, որ թերեւս սիւալ օրինակուած է

հրէջը պատասխանելով անոնց հարցման՝ կու տայ իւր սարսափելի նկարագիրը հետեւեալ ձեւով. « Իս եմ ալն չար, որ նստիմ ի վերայ ծննդականաց և յղի կանանց, զականջսն խորվեցնեմ, զիսս սապն բաշեմ, և խեղդեմ զմայրն և զմանունն: Եւ կերակուրն մեր տղայոց մարմինն է՝ որ յորովայնի մարն են և յղի



պեալ կացցես, ով պիղծ, զաւրութեամբ սր. խաչելոյն մինչև ի գալուստն Գի. և յոր վայր անուանես մեր յիշեցոյն՝ չունիս իշխանութիւն մտանել և մերձենալ ի ծառայս Այ. (յիստարկ) և ի բնակութիւն սոցա, յանուն Հաւր: ևն:

7. — Երդումն (Նաճարի) — Մեծ կառելորութիւն ունի հնոց համար նաեւ ու ծահտութեան դէպքը, որոյ յատուկ կանոն մը կայ մեր գրչագրին մէջ. « Գիր աւծահարիւ Յորժամ աւծ կամ կոր մարդ հարկանէ, առնու քահանայն և ընթեռնու զաղաթս սր. առաքելոյն Պաւղոսի տարսոնացոյ», որոյ սկիզբն է. « Իս Պաւղոս հալածիչ եկեղեցւոյ»: Նա կը պատմէ իժի ծանոթ պատահարս Երեմիոյն կղզւոյն մէջ. Անոր վրայ աղբս մ'ուզղեր է առ « Տէր սարսափող», ի պատասխանի որոյ պլացեր եկեր է Միւրայէլ հրեշտակն ու « պիր» մը յանձնէր երայեցեբէն տառով, որոյ բովանդակութիւնն է. « Սառն, սա, ապանծատի: Տախուպի: Տուշիմ: Մուշապայ, ալն անայ, տուզի, միայնու, սետառտի, մախախտի, մակառիանայ, սեթասիանայ, թէ ի պանայ, փուկանայ, կանաթայ, միայնու զետի», որ գրեալ էր մատամբն Այ. ևն: Յետոյ կը սկսի ընդարձակ երգման ձեւ մը. « Երդմեցուցանեմ զ'գճկ (366) ազգ աւճիցն, զգազանաց, զեռնոց, զսողնոց որ սողին ի վերայ երկրի. որ հարկանեն և տկարացուցանեն զմեզ, Երդմեցուցանեմ զ'գճ և զ' (304) ազգ կորից: Երդմեցուցանեմ զկորն և զմորն և զփալախն և զկարիքն, և զկորն որ ունի ի թուանից սատանայի». և թուարկութիւնը կ'ընէ բազմութեան մ'անլուր օձից, որոնք իւր երեւակայութեան մէջ կ'ապրին ու կը խայթեն: Անոնց մէջ կը յիշէ և « զաւճն երկոտասանգլխեան և չորեքլկամեան... զաւճն ազոաւատեան՝ որ զմահաբեր դեղն

կանանց և ծննդականաց: Խասապ՝ որ է սիրտ և լեարդ և թոր: Եւ զեւթն ամսոյ մանուկն գողանամը ի մարէն խուլ և մունջ, և տանիմը առ թագաւորն մեր յանդունդս: Մեր բնակութիւնն յանկիւնս տանց է և յախոս անանոց»: Սուրբերը բարկացած՝ « հանին զհրեղէն սուրն և կամեցան սպանանել զպիղծն»: Բայց բարեբախտաբար կը խնայեն, հետագայս չգրկելու համար անոր գեղեցիկ երեսէն: Միայն Պետրոս առաքեալ կը կշտամբէ զայն, ի միջի այլոց ըսելով. « Արդ կա-

ՈՒՃԻԹ = 1680) օրինակ մը, Շատ զբաղանակաց մէջ կայ ալը պէտքս ձեւով, բայց զայս աւելի համաձայն գտայ ներկայ նկարագրին:

1. Այդ պատճառաւ անոնց աւել կոչումը կրնայ ծագած լինել « ալը» բառէն, որ կը նշանակէ ծածուկ կամ իոր սող:

2. Յայնքն ալ՝ ըստ Յորդանայ կնոջ ճառի մը՝ ձկնախորդութեանց կը դիմէին օձից խայթուածոց դէմ (Կաբուլ, Ա, 1786):

3 Այդ և յաշորդ բոլոր օտարօտի բառից մէջ (որոց մասին տես առաջ, 431) բնագործ ուղղագրութեան հետ կիտարութիւնն ալ անփոփոխ կը պահեմ:

յաջիոյ ասեղն ունի... զաւան զլապըստա-
կալագն՝ որ զակունդակն ի զլուխն ունի
... զաւան մեծագոյ զխուլն և զհամրն...
զաւան թեւաւոր» կամ «զբաշեորն», և ու-
րիշ ամբոյն մը, զորս կ'երզնիեցնէ բաց
յայլոց՝ և «յերկնից թագաւորն յորմէ վէմը
դողան, խորը սասանին, անդունդը բոր-
բորին»։ Վսեմ տող մը։ Նոյնպէս և «ի
եւթնարերնե(ա)ն ջրհորն, յորմէ ծնեալն է
ստեղծուածն՝ որ ըստ պատկերի Այ. ա-
րարաւ»։ Նորօրինակ ծանօթութիւն մարդ-
կային ծագման։

Այս պաշտաման պահուն արարողապէս
ներկայ են սա կտորին մէջ յիշուած նիւ-
թերը։ «Կարդամ ի վերայ ջրայ և ի վե-
րայ կարագիս, և ի վերայ վիրիս և ի վե-
րայ թիրնից քոց՝ զահաւոր և զքանաչելի
անունն Այ.»։ որով կը յաւելուէ թէ «զհետ
ասայ, և տուր խմելոյ պահակին և ար-
բոյ աւաճարին, ողջանայ անուամբն Այ.»։

Սոյն աղօթքս գտայ և աւելի հին զբը-
չագրի մը մէջ, 1453ին, որ է աղօթագիրք
վ. Մարաթացւոյն։ Սա ի սկզբան ունի
ուրիշ համառոտ մ'ալ, սոյն խրատով։ «Առ
զլուին փութով և սաս զաղաւթս զայս
ի վեւայ ջրոյն»։ կը հետեւի՝ որ տագնաւ
պալից ժամերու մէջ կարագը զանց կը
լինէր։ «և եթէ ոչ ժամանիս աւժայհարին,
դու խաբարբերին արբոյ», որ — արդա-
րեւ զարմանալի բան — հաւասարապէս կը
զօրէ, որպէս թէ խայթեալն ու լրաբերը
մի և նոյն ստամոքսն՝ ունենային, կամ
հաղորդ լինէին նոյն ցաւին։ «և ասա,
կ'բւէ, զաղաւթս զայս։ Յանուն Հաւր և
Որդոյ և սուրբ Հոգոյն։ Նապրութայ, Ա-
պանձայ, Ստետադիմատիմ, Առախտի, Մա-
կառձիայ, Տեսառձիախանայ, թէպփան,
Ապուկանայ, թիմանու, Դեաիմ առախտի,
Սառապուն և Ասկառ ատին»։ Խեղճ ա-
ղօթող և խեղճ լսող, որ այս քարացած
բառերէն կը համարէիք բան մը հասկա-
նալ։

Կիպրիանոսը կը յարէ նոյն նպատա-
կով և համառոտ աղօթք մ'առ ս. փոկաս,
սա հրահանգով։ «Գի հետ ասայ և յամէն
հետ փշեա յաւան, փախչի ի սահմանացն»։

Փշուած արդէն ծանօթ է մեզ ուրիշ առ-
թիւ ևս (աստ, 374 և ծան. և 378)։

8. — Երդումն խոցից։ — Մետոյ ու-
նի «Աղաւթը ամենայն ցիւ խոցի», որ
կը սկսի բանաստեղծական նկարագրով
մը։ «Նբառ մի կայր ի մէջ տիեզերաց, ոչ
ճուզ ունէր և ոչ տակ և ոչ տերեւ։ Արծիւ
մի նստէր ի վերայ նորայ. ոչ ոսն ու-
նէր, ոչ թև և ոչ զլուխ։ տեսանէին տիե-
զերք, լսէին արարածը, հիացան հրեշ-
տակը»։ — ստուգիւ արտառոց պատկեր
մը. — «կալան կապեցին զնա և ասնն.
Ով ևս դու։ Ասէ. էս եմ որ երթամ մը-
տանեմ յազգս մարդկան, զմիսն ուտեմ,
զարինն ծծեմ, երկու աչացն խաւար բե-
րեմ»։ Բայց ինչպէս այս խուժողու յո-
շտուածն այդպիսի տոճե ծառէ մը և ան-
զուխի արծուէն։ «Ասէ ցնալ հրեշտակն.
Երբ յանվայր վայրի դաշտն՝ ուր ոչ գոյ
հաւու ձայն, նիստ ի վերայ վիշապին գա-
զաթանն, զմիսն կեր, զարինն ծծէ, եր-
կու աչացն խաւար ած, և ոչ մարդկան.
Հունիս իշխանութիւն մերձենալ ի ծառայս
Այ.»։ դատարկ, և իսկոյն կը յարէ. «Երդ-
մնեցոյանեմ զքեզ ի չորս գլուխ ա-
ւետարանն, ի Մթա. Մրկա. Վկա. Յնա։
կապել եմ զքեզ Հաւր տէրութեամբ, Որդ-
ւոյ զարութեամբ, Հոգւոյ իշխանութեամբ։
Առաքեաց տէր զհրեշտակ խաղաղութեան՝
որ եկեալ անցնէ զհրեղէն պարիսպն շուր-
ջանակի և պահեն զծառայցս Այ։ Թէ
խաղողիկն ես, թէ քաղցրն ես, թէ
կերն ես, թէ գնայուն ես, թէ խումբն
ես, թէ զուխիվայրն ես, թէ զուխի-
վերն ես, թէ այն ես որ մայրն մանկանն
չառէ, թէ սրտացաւ ես, թէ փորացաւ
ես», և խումբ մ'ուրիշ ցաւոց, որոց ա-
ռողջութիւն կը մաղթէ բարեխառութեամբ
բոլոր սրբոց՝ զորս կը թուէ անուամբ կամ
դասով։

Ահաւասիկ հին Հայուն կրօնքը, բաւա-
կան պարզութեամբ մեր հին զրականութեան

1. Այդ նկարագիրն հման է անկարծի՝ որ կը յիշուի
զրի մը մէջ (աստ, 2, 3, ք.)

սա նշխարաց մէջ, Կրօնք մը, զոր եթէ ուզենք ուղիղ սահմանել, պիտի կոչենք ոգեպաշտութիւն, և զոր Մանգակունին միւսակողմանի՝ որով և աւելի խիստ սահմանով մը կ'անուանէ «դիւսպաշտութիւն» (Իձ, 187)։ Հին Հայք քրիստոնէութեամբ չի փոխեր իւր աստուածները, և ոչ ալ պաշտամունքը. այլ նոր Աստուած մը կը յաւելու նախորդաց վրայ, որոց հանդէպ կը շարունակէ պահել իւր յարգանքը և կամ երկիւղը։ Յիսուսի ներկայութիւնը չի յաւ ջողիւր ցրուել անոր վաղմի ոգիները, չար ու բարի, որոնք շրջապատած կը պահեն զինք միշտ, և աւելի կը զբաղեցնեն իրենցմով քան Յիսուս։ Իւր լուսամիտ քարոզչաց վարդապետութիւնն ու վսիմ օրինակն ոչ ինչ կը զօրեն բաժնետու զինք իւր նախապաշարունակներէն. աւանդութիւնը՝ յեցած տգիտութեան, անդարձաբար փարած կը բռնէ զինքն անոնց։

Նոյն այդ կրօնից ուրիշ մէկ պատկերն է՝ զոր պիտի տեսնենք հետեւեալ գլխոյն մէջ։



2. ՊԱՆԱՐԱՆՔ

Սկսեալ Ե դարէն՝ ծանօթ են մեր քով բժժական երդումներ, նախորդաց մէկ տեսակը՝ զբաւոր, նոյնպէս հիւանդութեանց ու պատահարաց դէմ. որոց ուշ չպիտի դարձնէի՝ եթէ դարձեալ եկեղեցականք չլինէին զանոնք յարգողներ ու գործածողներ։

1. — Մագուսն, — Աղոնց ծագումն ու նշանակութիւնը շատ հին է, և բոլոր արեւելեան ազգաց պատմութեանց մէջ ծանօթ (Գորշ, Ա, 271)։ Եգիպտական պապիրոսներ գտուեցան երդմանձեւերով, զորս պատենի մէջ զրած՝ իրենց վրայ կը կրէին մարդիկ. նմանապէս պապիրոսի գլաններ՝ մոմիաներու քով գտնուեցան։ — Գիտենք նաեւ Հնդկաց, Պարսից և Արաբաց մինչև ցարդ զբաւոր պահարաններ գործածելը։ — Աւելի ուշ՝ արեւմուտք ալ ընդունեցաւ զանոնք. Պլուտարքոս կը յիշէ «եփեսա-

կան նամակները», որոց մին յայտնուած է այժմ. և է թրծուն կաւի շերտ մը՝ ծածկուած զրութեամբ, և կեղրոնը՝ Եփեսոսի կաշուպան Արտեմիայ պատկերը՝։ Յոյնք և Հռովմայեցիք մագաղաթէ աւելի կը զործածէին հաստատուն նիւթեր. ինչպէս արծաթեղէն և ոսկեղէն զնդակներ, որոց վրայ կային մթին բառեր ու երգումներ, և զորս կը կախէին վզէ, բազկէ ու կրծքէ (Գարեմբ. Ա, 255)։ Նաեւ ընտրեալ ժողովուրդն ունէր գրեր, կը թուի՝ նոյն իսկ սկիզբէն, առնուած յՈրինաց՝ որոց համար կ'ըստէր. «արկեցես զնոսա նշան ի ձեռնիքում» (Թ Օր. 2, 8)։ Յիսուսի օրով աւելի որոշ էր անոնց գործածութիւնը բոլոր Հրէից մէջ, որոցմէ կը զարտուղէին փարիսեցիք իրենց մագաղաթից առաւելագոյն ընդարձակութեամբ, և զորս կը յանդիմանէր Յիսուս՝ ըսելով. «լայնեն զգրապանակս իւրեանց» (Մտթ. ԻԳ, 6)։ Ձանոնք կը կապէին իրենց գլխոյն կամ ժապաւինածեւ կը պատէին բազկին։ Տաւալը կը յիշէ նաեւ աղօթից ու խրթին բառից գործածութիւնն անոնց մէջ։

Գիրտոտեանայ աշխարհն ալ ժառանգեց նախորդաց այդ բարքերն. այնպէս որ Դ դարուն Լաուդիկեայ ժողովն արգիւնց քաահանայից զբապանակներ գրել (կան. ԻԳ)։ Սկիզբերան սաստկապէս կը հարուածէր ժամանակի բժժանքները, որոց մէջ էր նաեւ գետոց անուններ գրել և հիւանդին վզէն կախել (մեկ. Կող. Ը, 617-9)։ Ս. Հերոնիմոս և ս. Ագոստինոս կը միաբանին դատապարտելու իրենց տեսած պահպանակները։ Ս. Ելիգիոս՝ Նուայոնի եպիսկոպոսն (Է դարուն) կը պայքարէր Գաղիացուց դէմ, որ այդ «սատանայի թոյնէն» կը կախէին մարդոց և անասնոց պարանոցէն, աղբրաց, ծառոց ու ճանապարհաց կիցերուն վրայ. և կը մերժէ նոյն իսկ եկեղեցականաց պատրաստածներն ալ ս. Գրոց խօսքերով (Կաբրու, Ա, 1788)։

1. Vigouroux, Dict. Bib. — Amulette.

2. Ար. — Phylactères.

3. Ար. — Amulette.

Բայց այս վերջին տեսակս սովորաբար ներելի էր. Սկեբերան կ'ըսէ՝ թէ Կոստանդնուպոլսոյ տիկնայք աւետարանակներ կը զետեղէին իրենց վրի զարդերուն մէջ. Նոյնը կ'աւանդէ իւր աշակերտն իւսիդոր պելուսացի նաեւ Եզրիպտոսի կառնոց համար: Ս. Հերոնիմոս կ'ընդունի այս ձեւը: Փեղասիոս պապը կը դատապարտէր զիսական անուններով զըուածները, չմերժելով հեշտակաց անուամբը շարադրածները: Եւ մեծն Գրիգոր պապ՝ Լոնգորարդաց թեոդոլինոս թագուհւոյն նուէր յղեց երկու պահարան՝ նորածին զաւակին համար, որոց մին Աւետարանի վճիռ մը կը բովանդակէր (անդ):

Սակայն թէ ներելին և թէ աններելին հաւատարմաց զործածուեր են միշտ ամբողջն, հակառակ Հարց բողոքներուն. և հետխօսք, և ամենին աւելի կարբող՝ յառաջ կը բերէ անոցմէ ընդարձակ չափով՝ Եւրոպայէն, Եզրիպտոսէն և այլ քրիստոնեայ աշխարհներէ, զրուած ազնիւ քառանց, ոսկի թիթեղի, կապարեայ թերթի, թրծուն կաւի, պապիրոսի, մազաղաթի, զրամոց, մատանոց, ապարանջանի և ամեն նիւթի վրայ (Ա, 527-35, 1783-85):

Իսլոր մարդկութեան օրինակին հետեւեցաւ մեր ազգն ալ: Մեր հին գրիչներէն նախ Մանդակունին եղաւ՝ որ մանրամասն նկարագրեց ու միանգամայն ոգորեցաւ բժժանաց ու զրոց ղեմ անպալման կերպով, ինչպէս պիտի ընէր իւր նման քրիստոնէութեան տեսականին շերմապէս փարած մարդ մը, որ չէր կարող հանդուրժել այն ամէն բանի՝ որ հեթանոսական ծագում կամ նմանութիւն ունէր: Ս' զիտէ, թերեւս ինքն ալ զիջանէր ուրիշ Հարց պէս, եթէ իւր հօտը զգրեւր սահմանափակէր աւետարանական իմաստից մէջ: Ինչ հակառակն Հայք ասոնց մէջ զեղծաց չարաչար, ինչպէս պիտի տեսնուի հետագայ նկարագրէն:

2. — Սովորաբար: — Մեր դասական լեզուի մէջ, Նոյնպէս զեւ և յետոյ, այդ յուռութիւն կը կոչուէին «պահարան» կամ

«գիր» և «գրած» կամ «գիր պահարան» և «գիր պահարան», համաձայն իրենց կազմին ու նպատակին: (Մանդ. ԻՁ.) Իսկ եկեղ. կառնոց մէջ «պահարանակ» ու «հմայեակ», կամ «պահարանական» (անդ էն) և «գիր պահարանական» (Ոսկ. հատք, 374): Եւ որ աւելի կարեւորն է մեզ, այդ գրեր մեր հարցմէ եւս կը համարուէին իսկապէս «երդմունս» (Մանդ. 186): Անոնց բովանդակութիւնը զուտ աւետարանական իմաստներ չէին. այլ նման գրաւոր աղօթից՝ ցնորական խօսքեր, «ժաժմուկս մտայածին բանից». անոնց մէջ խառնելով նաեւ սուրբ Գրոց մէջ անձանոթ ու խորհրդաւոր անուններ, «զանուան որ ոչ լսի ի պատուիրանս». և իբր շպար մ'անոնց՝ «և զանուն Քրիստոսի (կամ «զսուրբ անուն Աստուծոյ») ընդ նոսին արկանեն, զի գրածն աստուածական համարեցի» (անդ, 187): Մանաւանդ երբեմն այնպիսի ձեւեր կուտային՝ որ պահարանը «զլինքն յերկնից (իշած) ցուցանէ, զգրեալս մատարն Աստուծոյ» (անդ, 199):

Այս բանիս համար, կը յաւելու, Հաւցեր ոչ միայն «դիւթս ի տունս անեն առ ի յուռեմիլ» (անդ, 187), որոնք սովորաբար կանայք էին՝ (189), և կամ իրենց անոնց կ'երթային (185) հիւանդութեան ներելուն համեմատ, այլ շատ անգամ «զգիրն եւս սպասաւորք եկեղեցւոյ և արեղայք գրեն» (186, '8): Եւ քան զայս զարմանալին, «սառնորդք» անգամ, որոց «միս ի մարմին իզեացին և կամ ցաւ ինչ արագ անկանին», ոչ միայն դիւթերու կը դիմէին, «այլ և անձանց եւս ուռութս ուսանին». այս ինքն իրենք իսկ կը պատրաստէին գրերը, և իրենց կամ ուրիշ հիւանդաց վզէն կը կախին: «Ի փողս ցաւածիցն արկանեն» (187): Մանդակունին թոյն կը ժայթքէ այդ «եկեղեցւոյ զըլ խոց» դէմ:

Մոյն բարբերը տեւեցին մինչեւ վերջ,

1. Ինչպէս կ'երեւի Յունաց քով ալ քառ Ոսկերեքմի (ձեզ. Կոզ. Բ, 617-9):

որոց ուրիշ մանր նկարագիր մ'ալ կու տայ 'Խալիթ Վ. Ալաւկայ որդին՝ Ժի դարուն։ Նա եւս հակառակ է աղոնց՝ զարարք իրեն համար «անմիտ մարդիկ» են, և «ուսեակը զշար արուեստն՝ արբանեկութեամբ սատանայի և վարդապետութեամբ դիւաց»։ Ահա թէ ինչ կ'ընէին անոնք։ Հնոց պէս «օտար և ազգի ազգի անուանա յօղեն միմեանց», անոնց մէջ խառնելով հրեշտակաց, սրբոց, առաքելոց ու մարգարէից աւանդներ։ «Եւ այլ բազում ոգեկորոյս և օտարացոյցի յԱստուծոյ բան յօղեն, և զրեն ի մագաղաթի խառն ընդ անուանան»։ Բաց աստի «և բանաբաղ լինին յաւետարանն», և առանձին «գրովը» կը դնէին առաջնոց հետ, որպէս զի ասոնք յօմարութեամբ ընդունուէին։ Այդ բոլորը կը ծրարէին ուրիշ մագաղաթի մը մէջ, և «կնքեն տէրունական իսպիւն», այս ինքն իրենց մատանոյն խաչանիջ կնքով, «զի զայն Աստուծոյ կարգիցեն»։ յետոյ կը դնէին «ի դրճի», որ կաշեայ փորձիկ տփածեւ պատենի մը զաղափսրը կու տայ, նման անոնց զորս կը տեսնենք ղեւ մահմետական ազգաց ըով։ Տակաւին «պահապանս» կը կոչէին զանոնք, և կը կապէին «ի բազուկ և ի պարանոցս մանկանց իւրեանց և անասնոց, ձիոց՝ եզանց և ոչխարաց» (Վա. հմայ.)։

Ոչ միայն «անմիտ մարդիկ», այլ Եդարու «առաջնորդաց» մոռաւոր յաջորդներն ալ կը գործադրէին զայս տակաւին։ Կիրակոս կը պատմէ ՅՏ. Գառնեցի վին համար՝ թէ «Խնդրէին ի նմանէ և գիր պահապան անձանց իւրեանց, և նա անյապաղ տայր» քրիստոնէից և օտարաց անգամ, «գրելով զանուն սրբոյ Երրորդութեան և խորհրդական բանս աղօթից»։ Իսկ անոնք «առեալ հաւատով՝ կապէին յանձնին իւրեանց» (յրբ)։ — ՅՏ. Էրզրնկացի՝ Մատթէի մեկնութեան մէջ յառաջ

կը բերէ Ոսկերեանի վկայութիւնը՝ թէ «այժմ բազում կանայք առեւարանակ կան ինն զպարանոցաց մանկանցն» (ԽԳ, 5)։ Եւ արդարեւ զուտ ս. Գրոց նշխարներէ պահպանակներ ալ կը շինէին ղեւ Հայք, ինչպէս պիտի տեսնենք աւելի վար։ Վերջապէս զրեւու գլխաւոր շտեմարանն էր մեր ծանօթ Կիպրիանոսը¹, այդ եկեղեցական մատենար, որով իւր բովանդակած գրերն ալ պաշտօնական ծանուցուած և ընդունուած էին՝ գէթ կղերին մեծամասնութեան։

Յ. — Գրի ձեւեր։ — Այդ մատենին պահածներն իսկ պիտի լինին մեր ուշադրութեան նիւթ, — թէւ ժառանգութիւնը ալ ունին նման շատեր, որոնք իրենց նորութեամբ նուազ կը հետաքրքրեն զմեզ. և երկուք ալ օձահարի և մի ճաշակարարի՝ կը գտնուի Վ. Մարաթագոյ մէջ 1453 թուին։ — Ասոնք իրենց կազմութեամբ՝ և հրահանգօր իսկ՝ այնքան համաձայն են Մանդակունոյն, Գաթի և այլոց նկարագրութեանց, որ պահ մը կը փորձուիմ հաւաքածոյ մը նշկատել զայն հնագոյն պահարանաց², զգալի նաև լեզուի զանազանութենէն, քան թէ մէկ խորհողի գիտութիւնը։ Եւ այդ նմանութիւնը ոչ միայն ընդհանուր յօրինուածին, այլ երբեմն ամենացալոյ տէն մանրամասնութեան մէջ իսկ զգալի են։ Զոր օրինակ զրեւէ մին կ'ըսէ՝ թէ «այր մի էր ի բաշակ հրեշտակաց, և այն զրէր զգիրս զայս»։ և Պաղոսի հրեշտակէ մը ստացած գիրը զոր տեսանք՝ «զրեալ էր մատման Աստուծոյ» (աստ, 426)։ Մէջ պարզէն ասոնք Մանդակունոյն այն պահարաններէն են, որ «զինքն յերկնից ցուցանէ՝ գործարս մատման Աստուծոյ»։ Յետոյ՝ ասոնց մէջ ալ ճապարակում մը կը գտնենք անուանց՝ «որ ոչ լա ի պատուիրանս», կից սրբոց անուանց Դաւիթ վի։

1. Ուրիշ ազգերն ալ ունեցած են իրենց զբաղմունքները, որոց մէջ յատկապէս ծանօթ են Իլիզաւիլացոյ Եփրեմ և Hippatrica կոչուածները. երբուհիներ կը գտնուէին նաև Անգղիացոյ հին ազգաբազմի մէջ,

(Կարբու. Ա. 1454, 6).
2. Այդպէս էին նախորդ ծանօթութեան մէջ յիշուած երկու բովանդական մատեններն ալ. (Schlumberger, *Mélanges d'archéol. byz.* I, 139).

վերջապէս ի հնուց ֆնացած բաւական բան լինելու է կիպրիանոսի գրոց մէջ, որոցմէ ընդարձակ ու կարեւոր բաղուած մը պիտի ընեմ այս տեղը:

Մեր այս պահանջական համեմատութիւն մ'օտարաց հետ — ըստ հրատարակութեան կարրոլի — համոզեց զիս՝ թէ անոնց յորինողը չունեցան Հայուն երեւակայութեան աստիճանը: Աւելի հանգարտ են իւրեանց լեզուն ու գաղափարները: Դեւերը նուազ կ'այլանդակուին ու կը ներգործեն: Հեթանոսակերպ բանաձեւերը չունին մերոց առատութիւնը. և առաւելապէս իշխեցող տարրն անոնց՝ մէջ ս. Գիրքն է: Վերջապէս տկար է ընդհանուր աղբրան որ կայ անոնց ու մերոց մէջ. և ուր երբեմն աւելի կը սերտանայ, մատնացոյց պիտի ընեմ: — Թէ մերոց մէջ չկայ գէթ աստրական զօրաւոր հոսանք մը, չեմ կարող ըսել, բաղդատութեան եզերք կը պակասին ինձ: Այդ կարելի է թերեւս օտարութիւն է իսաթարաւած — բառից միմեքին մէջ՝ զոր ունին վերոյիշեալ երդմունք և հետագայ պահարանք: Այս վերջին պարագայս յատուկ էր արեւմտեայց ալ. ս. Հերոնիմոս կ'ըսէ՝ թէ իրենց զբարարք երաւական ազդեւորներէ կ'անուրին անծանօթ բառեր, տգէտ կանանց վրայ ազդեցութիւն ընելու համար (Թղթ. 2ի, 3): Տեսանք (աստ, 428) որ Հրեայք ալ իրենց կարգին կը գործածէին ուրիշ անիմանալի բառեր: Ուշագրաւ է և մեզ ալ պիտանի՝ Եւսեբիոսի ըսածը, թէ Յոյնք ողիւնբերու աշուններ կը կոչէին՝ որոնք երբեմն ոչ մէկ նշանակութիւն չունէին (Պտր. Աւետ. Ե, ր): Ուշ զնենք նաեւ Միլլերի, որ խօսելով բիզանդական գրերու մասին, անոնց մէջ գործածուած անծանօթ բառից ծագումը մոզոութեան առաջին ժամանակաց կ'ընծայէ, և կը համարի՝ թէ օրինակողը չհասկանալով՝ հետ զհետէ այլափոխեր են զանոնք: — Այժմ տեսնենք մեր պահանջականները:

ա. Կիպրիանոսն ունի բաց յայլոց՝ «Այլ գիր գլխացաւի», որոյ պատճառ կը համարուէին զեւերը, որոնք իբր թէ քերանց կը տանջէին ուղեղը. և որոց զէմ կուտայ այս բանաձեւը. «Սբ. հաւերն Սիրնի և Սիսիանոսի միայնակեցի, որ կացեալ էին ի ծերպս վիմաց ութսուն ամ, և չար դեքն նեղէին զնոսայ, և երկաթի քերպեք քերէին զ(ը)ղեղս նոցայ: Կացին յաղաթն առ տէր և ասնի. Տէր Աժ. մեր, ուր ա. նուսնս մեր յիշեսցի, մի ցաւեսցի զլուխ նորա, և մի կէս զլիւղ նորա, և մի խոց տեսցէ զլուին աշաւքն հանդերձ. եղիցի առողջութիւն և բժշկութիւն ծառայիս Այ. (չստարի)՝ տեսան համար» անուամբ Հար և Որդոյ և Հոգւոյն սրբոյ»:

բ. Նոյն ցաւին մէկ տեսակին համար է և հետեւեալ «Գիր գլխոյ» որ յանկարծակի ցաւի կէս գլխոյն». այս ալ արդիւնք էր ծովածին տնկար հրեշին, որ ուղեղը ծծելով կը ցամաքեցնէր ըստ յաջորդ ձեւին: «Ելանէր անկարս ի ծովն, գոչէր մոնչէր իբրեւ զսուրձ. զէպ եղև Մարիամ մագաղանացի, ասէ. Ուր երթաս, պղծ անկար չար: Եւ ասէ. Երթամ ի գեղ և յազարակ, նստիմ ի վերայ գագաթան մարդոյն, զսակեր(ս)ն բեկանեմ, զ(ը)ղեղն ծրծեմ, զաչսն խաւարեցուցանեմ»: Չափազանց խորիտ խոստովանութիւն, որուն «ասէ Մարիամ. Երդմեցուցանեմ զբեզ ի դաւաւարանիչն Գի. ի Մաթէոս, ի Մարկոս, ի Ղուկաս և Յոհաննէս, և յանուն սրբոյն Սիսիանոսի՝ միայնակեցին, որ քնակեալ էին ի ծերպս վիմաց ամս բազում, և չար դեքն նեղէին զնա, և զզլուին ցաւեցուցանէին: Եւ նա աղաչէր գտէր մեր Բն. Գա. և ասէր՝ թէ ուր լինի գիրս և հաստատար բանք, մի ցաւեսցի զլուին ծառայիս Այ. (չստարի) յանուն Հար և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն»:

գ. Ահա ուրիշ մը՝ իսառն օտարոտի բառերով. «Գիր Զերման. զրէ յուրբաթի». վերջինս՝ խտրականութեան իմաստով, նը-

1. Miller, Hippistriques, էջ 10.

2. Գրէի վրիպակ՝ փոխանակ Սիսիանոսի թէ Մագ-

զաղենացին՝ ճշմարտէս զարեւ յառաջ ազրած՝ ինչպէս կ'երկնեցնէ յանուն անոր, զաղին թողունք մեկնէլ:

ման «ուրբաթագրին» գոր տեսանք (աստ, 424)։ «Սալունա՝ խալունա՝ աշխունա՝ լայնապի՝. ասիեմ նաթի՝. կապը ջերման»։ Այսպէս կը խօսի մտաւոր էակի մը, որ հարկաւ ջերմը չէ, այլ տնոր դեւը. «Թէ հայ ես, իրողմեցուցանեմ զքեզ ի Յս. Գան. թէ տանիկ ես, երդմեցուցանեմ զքեզ ի յԱւրին եւ ի Մահմէտն. թէ ջնուտ ես, երդմեցուցանեմ զքեզ ի Մովսէս եւ յԱհարոն. եւ այլ ազգ զինչ եւ իցեա, երդմեցուցանեմ զքեզ ի թագաւորն քո. ել ի ծառայէս Այ. (Գոտորիկ)»։ Իշ. կ'աւարտէ այսպէս. «Այր մի էր ի բանակս հրեշտակաց, եւ այն գրէր զգիրս զայս. մին ակին, մին ջերման, մին աւ(յ)սահարի, եւ այլ ամենայնի, յանուն հար»։ Են. կարեւոր է դիտել՝ որ այս տեղ ազգային խորութիւն կը դուրի ջերմի դիւին մէջ. հետեւաբար ամէն աշխարհ կամ ցեղ իւր յատուկ չար ոգիներն ունէր յայս նախնեաց։ Ինչպէս ընդ հակառակն կային նաեւ աշխարհաց պահապան բարի ոգիներ, ըստ Դանիելի՝ որ մի մի հրեշտակ «իշխան» կը դնէ Պարսից, Յունաց եւ Հրէից (ժ, 13, 21. մթ, 1). եւ Եզնիկ ուրիշ Հարց հետ կը համարի զանոնք «յօգնաւորութիւն մարդկան, ազգաց եւ թագաւորութեանց, ըստ այնմ զոր ստէն՝, թէ կացոյց սահմանս ազգաց ըստ թուոյ հրեշտակացն Աստուծոյ» (Ա, 19)։

Դ. Ուշագրաւ է եւ հետեւեալը, որ կէս մ'աւետարանակ է եւ կը հաստատէ Երզնէ կացոյցն վերեւ ըսածը. «Այլ գիր ջերման Ավ. գրէ». առաջին մասն Յովհաննու աւետարանէն է. «Ի սաղարանէ էր բանն... (միկել)» եւ ոչ ինչ որ ինչ եղեանք. եւ ապա կը յարէ. «Յանուն տն. մերոյ Յի. Գի. եղև. Պիղծ տեստ եւ ջերմն, ել ի ծառայէս Այ. եւ զնա մուտ ի ջնուտ՝ որ ոչ խոտորովանի զՀայր եւ զՈրդի եւ զսբ. Հոգին, եւ այլ մի՛ մտանել ի սայ եւ մի՛ յայլ որ ի փառս Այ.»։ Այսպէս Աբրահամու քրիստոսութեանց թոռանց դէմ մեր ազգին ատելութիւնը բաւական հին է։

Ե. Այդ կարգէն եւ զուտ աստուածաշնչական ուրիշ մի «Գիր պատերազմի», գինուորներն անխոց պահելու համար։ Քա-

ղուած մ'է սաղմոսաց յարմար համարենքն, ու կը սկսի «Դատեա տէր զայնոսիկ» սաղմոսին երեք տներով. եւ զոր զարմանալի զուգադիպութեամբ կամ թէ հնաւանդ սովորութեամբ «աղապակէին եւ աւելին» Վարդանանը ալ՝ Ողուանից կոտորմէջ (նշիշ. Գ). ինչպէս եւ Գուրգէն արծւորուն Արարաց դէմ ձուկատու պահուն՝ «յորդանուտ արտասուօք եկաց յաղթս, տսելով զԱ. սաղմոսն (որ է նոյն Դատեայն) եւ զԶԲ» (Թով. արծ. 164)։

Գ. Հետաքրքրական է եւ հետագայ գիրը. «Իկին յորժամ դժար ծնանի, զայս հրէշտակաց անուանքս գրէ եւ ի ձեռն դիր՝ որ հեշտ ազատի Ավ. եւ երբ Ավ. ազատի, նա ի կրակն ձգէ»։ Ոչնչացնելու այս պատուէրը, որ կը պակասի ուրիշ գրերու մէջ, անշուշտ ֆեմսակար կ'ենթադրէ գրոյս պահպանութիւնը՝ երբ վտանգն անցած է։ Ահա բովանդակութիւնը. «Աքէ, Աքիա, Կաթառասար, Դիւա, որը փութացուցէր զձեռնդ սբ. կուսին Մարիամու, փութաւ զուցէր եւ այժմ զձեռնդ աղախնոյս Այ. այս անուն։ Բացցին դրուած ծննդոց սորայ եւ երեկեսցի պատկերն Այ. յայս էին հրեշտակն որ մանկայրարձէք էին սբ. կուսին յորժամ ծնան զՔս. ծանօթութիւն մ'այս վերջինս՝ որ չի գտնուիր մեր անկանոն գրոց մէջ, եւ ինքնահնար կը թուի կամ անծանօթ աղբիւրէ։

Ե. Շատ արարողալից է եւ սա միւս պահպանալը. «Գիր ակոբ. գրէ ի վերայ թիտի, եւ զլիւն կամ թովխունն՝ Բեբեռէ յարեկից կողմն՝ նոր մեխով»։ Արեւելից կողման իմաստը տեսանք (աստ, 372). Իսկ ինչ կը նշանակէ նոր մեխը. արդեօք նոր ատաման խորհրդանշան մը։ Ապա կը յարէ. «եւ սե հաւ մի մատաղ արայ, եւ Երեսուն ծունր դիր, եւ հարիւր Տէր ողորմես»։ Եթէ յանկարծ բժշկուէր, արդիւնքն

1. Ըստն է Բ. Որ. ԼԲ, Ծ. Այս վկայութեան մէջ «հրեշտակացն Աստուծոյ» ըստ Եթովպոսից է, հրեականը կը դնէ «սրբուցն Խորաշիւն»։ Եւ հայ թարգմանութիւնը՝ «սրբուց Աստուծոյ»։

2. 1778ի մեր գրապահնակը կ'ամրու զայց եւ կը պարզէ՝ «գած ի տունն», որ է պատին վրայ։

այդ բարեպաշտական գործոց համարելի էր՝ թէ սա խորթ բանաձեւին, «Ճժէ Մաւ նուէլ. Ճժէ Դանիէլ. Ճժէ Դադանիէլ և սր. Դանիէլ. Երդմեցուցանեմ զքեզ, որքն Ուրհայ, յՈւռհա և Յամանակայ, և ի սր. զքեզմանն Գի. ոչ մերձենաս, որ է ատամն ծառայիս Այ. այս անուն»¹: Անհեթեթ նմանութիւն փրկչական հանքս տարանին և փտած ատամի մը մէջ, գուցէ որպէս թէ այդու պիտի վախէր Եղեսիոյ որթակերպ դեմն ու փախչէր. և որ կ'արդարացնէ Դաւիթ վի՜ «անմիտ» ածականը:

Ը. Անքուն մանկանց համար կու տայ կիպրիանոս յաջորդ գիրը. «Անուանք Եփեսոսի մանկանցն գրէ, ի սնարքն տղային դիր, քունն տանի Ավ. — Մարսիմիանոս. Անդիքոս. Մատրոնիանոս. Դին. նէսիոս. Յոհանէս. Կոստանդինոս. Անտոնիւս»²: Յայտնի է եօթն մանկանց դաւաւոր քունը բարայրի մը մէջ. այս պահպանակով կը կոչուէին իրենց երկար նինջն նշխարիկ մը շնորհել քնակորոյս տըզային, որպէս զի անոր մայրիկը չտառապէր՝ հսկելով սնարին:

Բ. Գաղափարաց, բառից ու կարգի ճշմարիտ թոհրոճ մ'է և անոր «Գիր աւկին», որ է ակնհարութեան դէմ և «Քա. ի վերնասունն ի սր. Սիոն կայր, և գրեցին գիր աւկին աշխատամի՜տէ: Ոմանք գիտեն. ոմանք կորսնէ հետայ և հետեւոյ՝: Երեք հարան Նոյի այս են՝ որ սիրեն զաւուսն ամենայն իրաց: Հրամանաւն Այ. կապեմ զդիւթս և զգախարդս և զչարակն. Աղումա, Ալուսումալայ. Ամանայ. Հուհա, Հուլն սատարչաւ. Ամէնիսիակի. Քամի՜նտլ. Շահատին, (որ են) ական կապե և աւուսն ամենայն իրաց». ըստ որում չարակնութիւնը կը խամրեցնէր ու կ'եղծանէր, այդ կապերը կը չէզոքացնէին զայն: Յաջորդութեան մէջ կը պայքարի ձեռնածուաց ընչաքաղցութեան դէմ, և կ'աւանդէ քրիստոնէական ձեռնածութեան մը ձեւը: «Արդ

երեք եղբայրք երթային ի լեռն Չիթեւնեաց՝ ձեռն ուսանէին: Տէրն մեր Յս. Քա. ընդդէմ դիպաւ և ասէ. Յառաջ երթայր, եղբայրք: Ասեն. Երթամք ի լեռն Չիթեւնեաց՝ ձեռն ուսանիմք: Ասէ տէր մեր Յս. Քա. Երրնո՞ք որ ոչ գին առնուք և ոչ զազտ ասէք. ձեռն զայս ուսուցանեմ ձեզ. ասացէ՛ք՝ եթէ զտէրն մեր Յս. հրէայքն խոցեցին, արիւն և ջուր ելաւ. ջուրն՝ ի բժշկութիւն մեղաց, արիւն՝ ակնառածի»: Կը շարունակէ ուրիշ վիպով մը. «Այ. թորոս նստեալ գրէր և ջնէր, և չարակն պատառէր. Չարակն, Խաթակն, Խատակն, Տանակն, Դրուցակն՝ մի տեսանէ բարի, յանուն Հաւր և Որդոյն և Հոգւոյն սրբոյ: Ազի. Մագի. Չարեի. Չարուի»: Եւ կ'աւարտէ հովուերգութեամբ մը. «Էլ հու վիւն ծիրանի, արածէր յովիտն ծիրանի. յանկախաց պահէր եհան. որ ոք տեսաւ՝ զարմացաւ, որ ոք կերաւ՝ պատառեցաւ. ամենայն չարակն նոյնպէս պատառեցի ի զիմաց ծառայիս Այ. (չուտրիկ), անասնոց և խաշանց և երիվարաց և կաթին և մեղուաց և ամենայն զոյց. ամէն»: Այսքան անկապ զաղափարաց զուգորդութիւնը՝ մտաց անկանոն բեղնաւորութիւն մը ենթադրել կու տայ:

Ժ. Բանաստեղծութեան սիրուն ծագիկ մ'է հետագայն, որ դժբախտաբար կը վերջանայ անուանց անքերական կուտակութեամբ. այս է յատուկ «Գիր մեղուի», զոր մշակը մեծահաւատ խնամով մը կը տանէր փեթակին մօտ ծակի մը մէջ կը ծածկէր. «գրէ և ի փորոքն դիր»: Իսկ մեր հանձնը կարգանք զայն. «Որ անաւրիւնդ ես կենդանի և անհովիւ ես յարաւտի, որ անբեռն և անշալակ բերէր ի լեռանց բարձունց զբարին յանուն Այ. ով գեոք մեղուաց, աճեցէր յանուն Հաւր և Որդոյն և Հոգւոյն սրբոյ»: Ու կը կոչէ անոնց պաշտպանները, որոնք տեսակ մը Յաւերթհարստեանց կը թուին. «Այս են ա-

1. Նման Տաթեացոյն բաժնի՝ թէ քրիստոնէի քրեման զերգման է Քրիստոսի (Քրդ. ամբ. ՅՈ):

2. Այդ անուանց գրեթե ունէին նաեւ Կոպտերը (Կա.

բուլ. Ա, 1814):

3. Թեքեւս երեք անուանք են յաջորդ հարստաց.

4. Յայտնի է թէ դեմք են միշտ Թոդոյ՝

նուանք՝ որ ունին իշխանութիւն ի վերայ մեղուաց. իսննայիսէ, Աննայ մուսէ, կապա, թովմայ, իմաննայ, Արեգակնիայ, Չարմանազան, Արեգակնազան, Չարմանազան, Երեգան, այս են անուանք...՝ նոյի և կնկան»:

Ժա. Գրեւ կան՝ որոց մէջ թուղթ կամ մագաղաթ գործ չունին, այլ ուրիշ նիւթեր կը փոխանակեն զանոնք: Այսպիսի է՝ զոր օրինակ՝ «Այլ գիր ջերման», զոր «գրէ, կ'ըսէ, ի հասկիս, խորովէ և ուսէ կնկանովն»։ Ինչ հրաշագործ գիր, որ կնկային վնասարեւ ճաշակը բուժականի կը փոխէ: Բանաձեւին սկիզբը միայն կայ, «Մահի ահի, շարահի»։ Ֆնացորդը գրամու մը յաջորդ թերթով պատուեր տարեր է, խնայելու համար իրեն և ինձ՝ օրինակելու աշխատութիւնը:

Ժբ. Այդ կարգին կը սլատկանի հետեւեւեւ ալ, գրելի հացի վրայ. «Գիր կատաղածի. զէ զայս բանքս ի (40) անգամ) ի վերայ հացի»², և տուր որ ուսէ Ավ. — Ահա, բաքս, մաքս, ինաքս»: Կը հաւատամ թէ այս նիւթը՝ — եթէ բառերը ոչ՝ — նախորդէն աւելի դիրամարս է. և եթէ ոչ թոյնը, գէթ քաղցը կը բուժէր:

1. Պատած է բառի մը տեղ. Թերեւս «դասերաց» կամ «հարսանք» հոյի:

2. Նոյն ռոճով Բիւզանդացիք ալ արեւոյթեան դէմ կը գրէին սաղմասին մէկ խօսքը (ԱՊ. Տ) տակառին վերայ, կամ իննորի մը վրայ՝ զոր կը ձգէին դիւնոյն մէջ. — Առատ որդի համար՝ ծծակի մը վրայ կը գրէին իսա՝ σάβανον՝ սատուածական մակերեսներ և չորս կը կը նեւտին: — (Թերեւս դէմ՝ ազանոցին չորս անկանց վրայ կը գրէին Αδαν (կարբու, Ա. 1855):

Ժգ. Ուշագրաւ է նաեւ սովորութիւնը՝ առանց որ և է արտաքին նիւթի՝ նոյն իսկ ուղղակի ցաւած տեղւոյն վրայ գրելու, ինչպէս սա «Գիր ծծացաւի և խումրայի. գրէ ց հետ ի վերայ վրին, լաւնայ Ավ.»։ Այսպէս աւելի մերձաւոր ցաւին, ուստի բնականապէս և աւելի ազդեցիկ պիտի լինէր: Բովանդակութիւնն է. «Ձի կասիր արարի. կատակ արարի՝ սակէզ». և կը յարէ՝ «բ կրկնէ»: Մէկ անգամն իսկ շատ չէ՛ր արդէն:

Ժդ. Մեր ցարդ տեսածները փրկարար գրերն էին: Ադոնց հակառակն ալ կար. այս ինքն գրով մը մէկը սատանային իշխանութեան յանձնել, — ներհակը գրաւոր կամ անգիր կապերուն՝ զորս տեսանք (423-5, '33), — և որով անձը դժբախտութեանց ու վշտաց կը մատնուէր: Տաթեւացին է այս սովորութեան մեր մէջ գործադրութիւնը յիշատակող, խօսելով երդմանց վրայ. «Եւ կամ գրելով, որպէս սովոր են մարդիկ տմանք, զի գրեն զհոգին՝ սատանայի». և զոր «մեծամեծ մեղք» կը համարի (Քրդ. ամբ. 16): Այս գործը հարկաւ արդիւնք էր թշնամութեան, և հաւանօրէն գիրը կը յանձնուէր հակառակորդին ի պահեստ, մինչեւ որ օր մը հաճէր եղծանել զայն և անոր ազդեցութիւնը, որուն կ'ենթարկուէր ով որ կը հաւատար:

Շարայարելի

2. ՎԱՐՄԱՆ ԶԱՅՈՒՆԻ

